ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018թ. հունիսի 7-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի IV՝ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Թերեզա Սամսոնյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.II կիսամյակի և տարեկան առաջադիմության արդյունքների ամփոփման հարցը:

2.Մայրենիից և մաթեմատիկայից գիտելիքների ստուգման արդյունքների ամփոփման հարցը:

3. Տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպման հարցը:

1.Լսեցին.- II կիսամյակի և տարեկան առաջադիմության արդյունքների ամփոփման հարցը:

Ելույթ ունեցավ դասվար Թ. Սամսոնյանը՝ նշելով, որ II կիսամյակում IV՝դասարանում սովորել են 20 աշակերտներ: Սովորողները կիսամյակի ընթացքում եղել են ակտիվ, քիչ են բացակայել: Մայիսին տրվել են տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ մայրենիից և մաթեմատիկայից: Արդյունքները գոհացուցիչ են:Դասարանում սովորողների տարեկան առաջադիմությունը 100% է, որակական ցուցանիշը՝ 75%, բացակայությունը՝ 117 ժամ: Դասարանում կան 7 գերազանցիկ, 8 հարվածային աշակերտներ : Յուրաքանչյուր ծնողի ներկայացվեց իր երեխայի առաջադիմությունը: Տեղեկացան, թե ինչ թերացումներ կան աշակերտների մոտ: Ամփոփվեցին տարեկան գնահատականները:

Որոշեցին.- Ավելի ուշադիր և հետևողական լինել երեխաների ուսման հարցում:

2. Լսեցին.- Մայրենիից և մաթեմատիկայից գիտելիքների ստուգման արդյունքների ամփոփման հարցը:

Ելույթ ունեցավ դասվար Թ. Սամսոնյանը՝ նշելով, որ սովորողները հանձնել են գիտելիքների ստուգում հունիսի 2-ին և 5-ին համապատասխանաբար մայրենիից և մաթեմատիկայից: Բոլոր աշակերտները մասնակցել և հաջողությամբ հանձնել են գիտելիքների ստուգում: Արդյունքները գոհացուցիչ են: Մայրենիից որակական ցուցանիշը կազմել է 75%, մաթեմատիկայից՝ 80%: Բոլորն էլ հաջողությամբ փոխադրվել են 5-րդ դասարան:

Որոշեցին.- Գիտելիքների ստուգման արդյունքները համարել «լավ»:

3. Լսեցին.- Տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպման հարցը:

Ելույթ ունեցավ դասվար Թ. Սամսոնյանը: Նա նշեց, որ դպրոցում ամեն տարի տարեվերջին կազմակերպվում են էքսկուրսիաներ Հայաստանի տեսարժան վայրեր: Ծնողների կողմից առաջարկություն եղավ էքսկուրսիան կազմակերպել Սևան երթուղով: Այդ առաջարկը բոլորի կողմից հավանության արժանացավ:

Որոշեցին.- Հավաքել 3500-ական դրամ, լուծել տրանսպորտի հետ կապված խնդիրները և էքսկուրսիան կազմակերպել հուլիս ամսվա ընթացքում:

Ծնողական խորհրդի նախագահ՝ / Լիլիթ Թադևոսյան/

Քարտուղար՝ /Լիլիթ Պապյան/